ՄՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՈՒՇԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության և Գերմանիայի կրթության և հետազոտությունների դաշնային նախարարության միջև

գիտության և տեխնոլոգիաների ոլորտներում համագործակցության զարգացման մասին

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը և Գերմանիայի կրթության և հետազոտությունների դաշնային նախարարությունը (այսուհետև՝ Կողմերը),

համաձայնելով, որ միջազգային գիտական համագործակցությունը զգալի նշանակություն կունենա հայկական և գերմանական գիտական համայնքների համար և միևնույն ժամանակ կնպաստի երկու պետությունների սոցիալական ու տնտեսական զարգացմանը,

ցանկանալով հաստատել դինամիկ ու արդյունավետ համագործակցային կապեր Կողմերի գիտական ու նորարարական կազմակերպությունների, ինչպես նաև անհատ գիտնականների միջև՝ հաստատված «Գիտական և տեխնիկական համագործակցության մասին» 1986 թվականին ստորագրված և Հայաստանի Հանրապետության կողմից 1992 թվականին վերահաստատված Գերմանիայի Դաշնային Հանրապետության և Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության միջև համաձայնագրով,

հավանություն տալով Եվրոպական հարևանության քաղաքականության շրջանակներում Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև գործող գործընկերային ու համագործակցային՝ *այդ թվում 1996 թվականի ապրիլի 22-ին Լյուքսեմբուրգում ստորագրված «Գործընկերության և համագործակցության մասին եվրոպական համայնքների ու դրանց անդամ պետությունների՝ մի կողմից և մյուս կողմից՝* Հայաստանի Հանրապետության միջև» համաձայնագրերի դրույթներով սահմանված խնդիրներին ու նպատակներին,

համաձայնեցին հետևյալի մասին

Հոդված 1

Կողմերը պայմանավորվում են սույն Հուշագրին, գործող Համաձայնագրին, իրենց պետությունների մասնակցությամբ գործող միջազգային պայմանագրերին, ինչպես նաև ազգային օրենսդրությանը համապատասխան և իրենց իրավասության շրջանակներում իրականացնել համագործակցություն գիտության և տեխնոլոգիաների բնագավառներում:

Հոդված 2

Սույն Հուշագրի շրջանակներում Կողմերը կխթանեն համագործակցությունը գիտական կազմակերպությունների, համալսարանների, ոչ համալսարանական գիտատեխնիկական կազմակերպությունների, *տեխնոլոգիական* ընկերությունների, ինչպես նաև հետազոտական խմբերի ու անհատ գիտնականների միջև:

Հոդված 3

Կողմերը կխրախուսեն համատեղ հետազոտությունների իրականացումը երկու պետությունների պետական և մասնավոր կազմակերպությունների միջև և կապահովեն ազգային կամ եվրոպական մակարդակով տրամադրված ֆինանսական միջոցների օպտիմալ օգտագործումը:

Հոդված 4

Կողմերը կապահովեն լիարժեք համակարգ գիտական անձնակազմի փոխանակման, համատեղ գիտաժողովների, սեմինարների, գիտագործնական հանդիպումների, ինչպես նաև համատեղ գիտատեխնիկական նախագծերի իրականացման համար:

Հոդված 5

Կողմերը կհաստատեն համատեղ ֆինանսավորման մեխանիզմ, որը միտված կլինի աջակցելու համատեղ գիտատեխնիկական նախագծերի իրականացմանը գիտության գերակա ուղղությունների շրջանակներում:

Ֆինանսավորման կարգն ու պայմանները կհաստատվեն Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության *գիտության պետական կոմիտեի* ու Գերմանիայի կրթության և հետազոտության դաշնային նախարարության միջազգային բյուրոյի կողմից: Մրցույթի հրավերը հայտարարելուց առաջ Կողմերը, կամ նրանց ներկայացուցիչները, կճշգրտեն ֆինանսավորման ծավալները և գերակա ուղղությունների ցանկը, ինչպես նաև մրցույթի հրավերի տեքստը:

Հիմնական սկզբունքը կլինի այն, որ մրցույթի կազմակերպումը, ֆինանսավորվող նախագծերի ընտրությունը, մասնակից կազմակերպությունների ֆինանսավորումը, ինչպես նաև համատեղ ներդրված ֆինանսավորման մեխանիզմների ստուգադիտումն ու գնահատումը հավասարապես բաժանված են Կողմերի միջև:

Սույն Հուշագրի շրջանակներում նախատեսվում է յուրաքանչյուր հրավերի շրջանակներում ֆինանսավորել առավելագույնը 10 (տասը) նախագիծ: Յուրաքանչյուր նախագծի համար հայկական կողմը տրամադրում է մինչև 15000 (տասնհինգ հազար) եվրոյին համարժեք ՀՀ դրամ, իսկ գերմանական կողմը՝ մինչև 25000 (քսանհինգ հազար) եվրո:

Նախագծերը ֆինանսավորման կերաշխավորվեն համատեղ և յուրաքանչյուր նախագծին հատկացվող ֆինանսական միջոցների ծավալները կսահմանվեն առանձին արձանագրություններով, որոնք կկնքվեն Կողմերի կամ նրանց ներկայացուցիչների միջև:

Հոդված 6

Կողմերը կխթանեն հայկական ու գերմանական կազմակերպությունների միջև գործընկերային կապերի հաստատումը՝ նպատակ ունենալով ապահովել Եվրամիության ՀՏԶ (Հետազոտությունների և տեխնոլոգիաների զարգացում) կաղապարային ծրագրին: Այս ուղղությամբ Կողմերը կաջակցեն հայկական գիտական հանրության Եվրոպական հետազոտական տարածք ինտեգրմանը՝ երկուստեք կիսելով լավագույն փորձն ու ձեռքբերումները:

Հոդված 7

Երկու պետություններում գործող ազգային օրենսդրություններին համապատասխան՝ Կողմերը համագործակցության ընթացքում ստացված գիտական և գիտատեխնիկական տեղեկատվությունը մատչելի կդարձնեն համաշխարհային գիտական հանրությանը՝ հրապարակման ընդունված եղանակների շրջանակներում:

Սույն Հուշագրի շրջանակներում գիտական համագործակցության արդյունքում ստեղծված կամ տրամադրված մտավոր սեփականության իրավունքի հետ կապված հարցերը կլուծվեն համաձայն երկու պետություններում գործող ազգային օրենսդրությանը, ինչպես նաև մտավոր սեփականության մասին միջազգային այն համաձայնագրերի, որոնց մասնակցում են Կողմերի պետությունները:

Սույն Հուշագրով կարգավորվող համատեղ իրականացվող գիտական ծրագրերի մասնակիցները Կողմերին կտրամադրեն տեղեկատվություն՝ համատեղ ծրագրի իրականացման ընթացքի, ծրագրի արդյունքների առևտրայնացման, հեղինակային հոնորարների և մտավոր սեփականության իրավունքների մասին, մասնավորապես՝

ա) մինչև նախագծի իրականացումը համատեղ գիտական ծրագրերի մասնակիցների մոտ առկա նոու-հաուների օգտագործման ու մտավոր սեփականության մասին,
բ) նախագծի ընթացքում ստեղծված նոու-հաուների և մտավոր սեփականության օգտագործմանն ու պաշտպանությանն ուղղված ձեռնարկվելիք միջոցառումների մասին:

Հոդված 8

Սույն Հուշագիրը կարող է լրամշակվել ու փոփոխվել Կողմերի գրավոր համաձայնությամբ: Լրամշակումները և փոփոխությունները կձևակերպվեն առանձին արձանագրությամբ, որը կհանդիսանա սույն Հուշագրի անբաժանելի մասը և ուժի մեջ կմտնի Հոդված 9-ում սահմանված կարգով:

Սույն Հուշագրի մեկնաբանման ու դրա կիրառման ընթացքում ծագած վիճաբանությունները կլուծվեն բանակցությունների ու խորհրդակցությունների միջոցով:

Հոդված 9

Սույն Հուշագիրը կգործի 4 (չորս) տարի ժամկետով և ուժի մեջ կմտնի *դրա համար անհրաժեշտ Կողմերի ազգային օրենսդրությամբ սահմանված ներպետական ընթացակարգերի կատարման մասին դիվանագիտական ուղիներով մյուս Կողմին ծանուցելու օրվանից*: Սույն Հուշագրի վավերականության ժամկետը ինքնաբերաբար կերկարացվի հաջորդ 4 (չորս) տարիների համար, եթե վերջինիս ժամկետի ավարտից 6 (վեց) ամիս առաջ Կողմերից մեկը չի տեղեկացնում Հուշագրի դադարեցման իր մտադրության մասին:

Սույն Համաձայնագիրը կատարված է 2 բնօրինակից՝ յուրաքանչյուրը հայերեն, գերմաներեն և անգլերեն, ընդ որում բոլոր տեքստերն էլ հավասարազոր են: Սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման ժամանակ ծագած տարաձայնությունների դեպքում նախապատվությունը տրվում է անգլերեն տեքստին:

Քաղաք՝ ---Բոնն--------------------------- «--24--» ----08---------- 2011 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կողմից՝

Սամվել Հարությունյան

____

ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտե Նախագահ

Գերմանիայի կրթության և հետազոտությունների դաշնային նախարարության կողմից՝

Միխայիլ Շլիխտ

____

ՌԴ և ԱՊՀ համագործակցության բաժին Տնօրեն